

S Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒԹ Յ ՈՒՆ

2008 ԹՎԱԿԱՆԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՆՎԱՐ-ՄԵԴԻՍԵՄԲԵՐԻՆ


Իրական հատված

Հաշվետու ժամանակահատվածում պահպանվեցին տարվա սկզբից արձանագրվող բարձր տնտեսական աճի միտումները՝ հունվար-սեպտեմբեր ամիսներին այն կազմել է 10.4%: Արդյունքում 2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 2606.1 մլրդ դրամ (ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 10.5%): Պետք է նշել, սակայն, որ իրական աճի ցուցանիշը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 3.1 տոկոսային կետով, իսկ դեֆլյատորը բարձր է 6.6 տոկոսային կետով:

Տնտեսության ոչ արտահանելի հատվածը (կապիտալ շինարարություն և ծառայություններ) շարունակում է հանդիսանալ տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը¹: Նշված ժամանակահատվածում տնտեսական աճի ապահովման գործում մեծ դեր են ունեցել շինարարության և ծառայությունների ոլորտները, որոնց հաշվին ապահովվել են տնտեսական աճի համապատասխանաբար 4.1 և 3.2 տոկոսային կետը: Արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) 2008 թվականի հունվար-սեպտեմբերին աճել է 4.1%-ով և ապահովվել 10.4% տնտեսական աճի 0.6 տոկոսային կետը: Հաշվետու ժամանակահատվածում գյուղատնտեսության աճը կազմել է 4.3%, իսկ տնտեսական աճի նպաստման շափը՝ 0.8 տոկոսային կետ:

Արձանագրված աճին տնտեսության առանձին ճյուղերի նպաստման շափը բերված է ստորև:

¹ Առևա պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին



2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների մոտ 3.4% աճ՝ 2007 թվականի նույն ժամանակահատվածում արձանագրված 2.1% աճի դիմաց²: Աճը պայմանավորված է հանքագործական արդյունաբերության և էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի, գոլորշու արտադրության և բաշխման ծավալների համապատասխանաբար 3.2 և 11.7 տոկոս աճերով: Հանքարդյունաբերության ճյուղում աճ է արձանագրվել, մասնավորապես, մետաղական հանքաքարերի արդյունահանման և հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերում, համապատասխանաբար՝ 3.2 և 3.9 տոկոսի չափով: Չնայած մշակող արդյունաբերության ոլորտում աճ է արձանագրվել (1.5%), սակայն նրա առանձին ենթաճյուղերում գրանցվել է թողարկման ծավալների նվազում (մասնավորապես՝ մետաղագործական արդյունաբերության (7.5%) և քիմիական արդյունաբերության (4.6%) ճյուղերում): Իսկ «Անդամքերի, ներառյալ՝ խմիչքների արտադրության», և «Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության» ճյուղերում արձանագրվել են համապատասխանաբար 6.9 և 16.2 տոկոս աճեր:


2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արձանագրվել է գյուղատնտեսության և անտառային տնտեսության համախառն արտադրանքի ծավալի 4.2% աճ: Ընդ որում, գյուղատնտեսության

² Այսուհետ՝ ցուցանիշները ներկայացված են տնտեսության ճյուղերում ստեղծված համախառն արտադրանքի ծավալներով

աճը պայմանավորված է բուսաբուծության համախառն արտադրանքի 4.8% աճով, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքի ինդեքսն աճել է 2.9%-ով:

Չինարարության ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հաղիսացել քնակչության և կազմակերպությունների, պետական բյուջեի միջոցները: 2008 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում իրականացված շինարարության ծավալները աճել են 12.1%-ով: Քնակչության և կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները կազմել են ընդհանուր իրականացված կապիտալ շինարարության համապատասխանաբար 73.4 և 17 տոկոսը: Պետական բյուջեի միջոցների հաշվին շինարարության ծավալները կազմել են ավելի քան 42.7 մլրդ դրամ և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել 17.5%-ով:

Չինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի ունեցել են հետևյալ կառուցվածքը (հիմնական միջոցները շարունակում են ուղղվել անշարժ գույքի հետ կապված գործառնություններին, ինչպես նաև տրանսպորտի և կապի ոլորտներին):



2008 թվականի ինն ամիսների ընթացքում հանրապետությունում տեղի ունեցած շինարարությունը հիմնականում կենտրոնացած է եղել Երևանում (շուրջ 87.2%), իսկ մարզերից առանձնացել է Սյունիքը (3.4%):

2008 թվականի սեպտեմբերին 2007 թվականի դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 104.2%: Ընդ որում, պարենային ապրանքների գծով արձանագրվել է 1.1%, ոչ պարենային ապրանքների գծով՝ 5.2% գնած: Իսկ ծառայությունների ոլորտում արձանագրվել է 9.7% գնած: Ծառայությունների մասով հատկապես բարձր գնած է արձնագրվել բուժապատճենաբան և իրավական և բանկային ծառայությունների գծով, համապատասխանաբար 18.0% և 14.6%:

Աշխատանքի շուկա

Հնթացիկ տարվա հունվար-սեպտեմբերին պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը հաճապետությունում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվել է 0.8 տոկոսային կետով և կազմել 6.3% (75.0 հազար մարդ):

2008 թվականի հունվար-սեպտեմբերին միջին ամսական անվանական աշխատավարձը 2007 թվականի հունվար-սեպտեմբերին գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 20.2%-ով, ընդ որում, բյուջետային հատվածի աշխատավարձն աճել է 20.0%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տնտեսության բյուջետային և ոչ բյուջետային հատվածներում միջին աշխատավարձը համապատասխանաբար կազմել է 63022 դրամ և 109300 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 88581 դրամ:

2008 թվականի հունվար-սեպտեմբերին իրական աշխատավարձի աճը 2007 թվականի հունվար-սեպտեմբերի համեմատ կազմել է 9.4%: Աշխատանքի արտադրողականությունն իրական արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 7.0%-ով:

Արտաքին հատված

2008 թվականի հունվար-սեպտեմբերին արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ աճել է 31.3%-ով և կազմել է 3959.1 մլն ԱՄՆ դոլար: Արտաքին առևտրաշրջանառության աճը պայմանավորված էր ներմուծման բարձր աճով և իր մեծ տեսակարար կշռով ապրանքաշրջանառության մեջ: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել արտահանման աճի տեմպերի կրճատում և ներմուծման աճի արագացում՝ արտահանումը կազմել է 832.5 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 0.4%-ով, իսկ ներմուծումը կազմել է 3126.7 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 43%-ով:

Ինչպես և նախորդ երկու տարիներին, արտահանման վարքագիծը ինն ամիսների արդյունքներով հիմնականում բացատրվում է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, քամնկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի նվազմամբ. դիտարկվող ժամանակահատվածում արտահանումն առանց վերը նշված խմբի աճել է 2.7%-ով: Սինեույն ժամանակ, նախորդ տարվա ինն ամիսների համեմատ տեղի է ունեցել պատրաստի սննդի և հանքահումքային արտադրանքի արտահանման աճ՝ համապատասխանաբար՝ 33.3 և 7.7 տոկոսով: Նշված ապրանքախմբերի նպաստման չափը արտահանման ընդհանուր աճում կազմել է համապատասխանաբար՝ 3.9 և 1.1 տոկոսային կետ:

Ներմուծման բարձր աճը հիմնականում պայմանավորված է քնակչության եկամուտների բարձր աճով, և մասամբ՝ 2003 թվականից սկսված փոխարժեքի արժևորմամբ։ Նշենք նաև, որ ներմուծման աճին նպաստել է նաև ներդրումային քնույթ ունեցող ապրանքների ներմուծումը. ընդհանուր ներմուծման մեջ մոտ 18% կշիռ ունեցող «Սեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարրեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքախմբերի աճը 9.4 տոկոսային կետով նպաստել է ներմուծման աճին։


2006–2008 թվականներին հումկար-սեպտեմբերի ընթացքում արտաքին առևտության միտումները

հիմնական միտումները

	Ապրանքախմբերի նպաստման չափը ընդհանուրի մեջ (տոկոսային կետ)		
	2006	2007	2008
Ընդամենը արտահանում, այդ թվում հետևյալ խմբերի հաշին՝	3.6	21.8	0.4
Պատրաստի սննդի արտադրանք	-0.8	5.6	3.9
Թանձ. և կիսաթանձ.քարերի, թանձ. մետաղների և դրանցից իրեր	-6.7	-8.3	-2.3
Ոչ քանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրեր	-5.0	12.6	0.4
Հանքահումքային արտադրանք	4.0	4.4	1.1
Այլ ապրանքախմբեր	4.9	7.5	-2.7
Ընդամենը ներմուծում, այդ թվում հետևյալ խմբերի հաշին՝	19.2	45.2	43.0
Պատրաստի սննդի արտադրանք	0.8	4.1	3.0
Թանձ. և կիսաթանձ.քարերի, թանձ. մետաղների և դրանցից իրեր	3.2	1.5	1.2
Ոչ քանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրեր	4.2	6.6	3.9
Հանքահումքային արտադրանք	3.2	8.3	5.3
Սեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ; սարքեր ապարատներ; տարրեր արդյունաբերական ապրանքներ	6.3	6.3	9.4
Այլ ապրանքախմբեր	7.9	21.4	20.2


Առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 2294.2^3 մլն դրամ և նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել 69%-ով։ Ընդ որում, աճին նպաստել է նաև վերը նշված ներդրումային քնույթի ապրանքների ներմուծումը, որոնց բացասական մնացորդի աճը 15.5 տոկոսային կետով նպաստել է առետրային հաշվեկշռի ձևավորմանը։ Հաշվեկշռի բացասական մնացորդը ընթացիկ տարվա ինն ամիսներին կազմել է ՀՆԱ-ի 26.9%-ը՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 23.6%-ի դիմաց։

³ Արտաքին առևտության հաշվեկշռը հաշվարկվել է մաքսային վիճակագրության տվյալների հիման վրա՝ որպես արտահանման (ՖՕԲ) և ներմուծման (ՍԻՖ) տարբերություն։ Նույն ցուցանիշը հաշվարկված ՖՕԲ գներով (ներմուծում՝ ՖՕԲ) նախնական տվյալներով կազմել է 1812.7 մլն դրամ։




ՀՀ տնտեսությունում առևտրային հաշվեկշռի ամենամեծ բացասական մնացորդը ձևավորվել է հետևյալ գործընկեր երկրների հետ՝ Ռուսաստանի՝ Դաշնություն, Չինաստան, Ռուսաստան, Մուրմանսկ, Իրան, համապատասխանաբար՝ 420.1, 258.7, 213.2, 181.9 և 132.7 մլն ԱՄՆ դոլար: Առևտրային հաշվեկշռը դրական է Նիդեռլանդների, Վրաստանի և Լյուքսեմբուրգի հետ, համապատասխանաբար՝ 101.0, 31.0 և 1.0 մլն ԱՄՆ դոլարի չափով:

Բացարձակ արժեքով արտաքին առևտրաշրջանառության դինամիկան 2000-2008 թվականների հունվար-սեպտեմբեր ամիսներին ներկայացված է ստորև բերված պատկերում:



Փոխարժեք

2008 թվականին, ըստ էռիջյան, դադարել են նախորդ տարիներին ձևավորված փոխարժեքի կտրուկ արժեորման միտումները: Մասնավորապես, եթե ընթացիկ տարվա հունվար ամսին դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը կազմել է 306.83 ՀՀ դրամ, ապա հունվար-սեպտեմբերին այն մնացել է գրեթե անփոփոխ և կազմել 305.82 դրամ՝ արժեորվելով 1 դրամով 2007 թվականի նույն ժամանակահատվածում 13 դրամով արժեորման դեպքում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցվել է դրամի 12.7% արժեորում (2007 թվականի ինն ամիսներին՝ 18.5%): Իրական արդյունավետ փոխարժեքի⁴ միջին արժեորումը 2008 թվականի ինն ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կազմել է 6.8%, ամբողջությամբ պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի արժեորմամբ:



Ֆինանսական հատված

2008 թվականի սեպտեմբերի վերջի դրությամբ փողի բազան կազմել է 438.3 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 2.6%-ով: Նույն ժամանակահատվածում ԿԲ-ից դուրս

⁴ Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջնացված շարժմնթացը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարեւոր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ: Իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը հանդիսանում է այն հիմնական ցուցանիշը, որն ընութագրում է հիմնական արժույթների միավորված շարժման ուղղությունը եւ կարող է հիմք հանդիսանալ վերջիններիս զարգացման տենդենցների կողմնորոշիչ հետեւություններ անելու համար: Բացի դրանից այն հիմնական ցուցանիշն է, որն ընութագրում է երկրի մրցունակությունը միջազգային շուկայում: Իրական արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս մեր եւ գործընկեր երկրների միջեւ հարաբերական գների վարքագիծը՝ թերված մեկ արժույթի:

կանխիկը աճել է 3.3%-ով, արդյունքում կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում տարեսկզբի նկատմամբ աճել է 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 82.5%:

2008 թվականի սեպտեմբերին 2007 թվականի դեկտեմբերի համեմատ փողի զանգվածն աճել է 9.0%-ով, ընդ որում դրամային և արտարժութային ավանդների հաշվին ապահովվել է աճի համապատասխանաբար 1.3 և 1.7 տոկոսային կետերը: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2008 թվականի սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել են 491.3 մլրդ դրամ, որից 30%-ը արտարժույթով ավանդներն են: Բանկային համակարգից դուրս կանխիկը դրամական զանգվածի աճին նպաստել է 4.2 տոկոսային կետով:

Նոյեմբերին ժամանակահատվածում բանկային համակարգի զուտ արտաքին ակտիվները նվազել են 40.7%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները կրկնապատկվել են, աճը պայմանավորված է տնտեսության վարկավորման 43.7% աճով: Այսինքն, տեղի է ունեցել ներքին տնտեսության վարկավորում արտաքին շուկաներում փոխառած միջոցների հաշվին: Առևտրային բանկերի վարկերը 2008 թվականի ինն ամիսների վերջի դրությամբ կազմել են 614.1 մլրդ դրամ, որի 37.5%-ը կազմել է արտարժույթով վարկերը:

Եթե առևտրային բանկերի դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույթները 2007 թվականի դեկտեմբերին կազմել էին 16.45%, ապա 2008 թվականի հունվարին՝ 17.17%, իսկ սեպտեմբերին՝ 17.19%: Նոյեմբերին ժամանակաշրջանում գրանցվել է առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույթների աճ: Այսպես, եթե 2007 թվականի դեկտեմբերին կազմել է 6.13%, 2008 թվականի հունվարին ավանդների տոկոսադրույթը աճել է 0.4 տոկոսային կետով (6.51%), ապա սեպտեմբերին այն աճելով 0.54 տոկոսային կետով կազմել է 6.67%:

2008 թվականի ինն ամիսներին ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույթների աճ: Այսպես, եթե 2007 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաքարտությունը կազմել է 6.6%, ապա 2008 թվականի նոյեմբերին ժամանակահատվածում այն կազմել է 9.01%: 2008 թվականի ինն ամիսներին տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 44.02 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին ժամկետայնությունը կազմել է 2609 օր՝ նախորդ տարվա նոյեմբերին ժամանակահատվածի նկատմամբ աճելով 1320 օրով, ինչը պայմանավորված է հիմնականում երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխմամբ: Տոկոսադրույթների աճին նպաստել է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից ռեպո տոկոսադրույթի բարձրացումը, որի արդյունքում այն 2008 թվականի սեպտեմբերի վերջին կազմել է 7.75%՝ 2007 թվականի դեկտեմբերի 5.75%-ի դիմաց:

2008 թվականի ինն ամիսներին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է քողարկման ցուցանիշը 1.03 անգամ, իսկ տեղաբաշխում/քողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.7:

Ֆինանսական շուկայի տոկոսադրույթները 2008 թվականի ինն ամիսների ընթացքում

Ամիսներ	հուն վար	փետր վար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպ տեմ բեր
Առևտրային բանկերի վարկեր	17.17	16.45	17.17	17.29	17.39	17.35	16.8	17.35	17.19
Առևտրային բանկերի ավանդներ	6.51	6.16	7.36	6.14	5.71	5.75	6.23	5.75	6.67
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	5.75	6.0	6.25	6.50	6.75	7.0	7.25	7.5	7.75


ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՏԻՏՈՒՐԸ⁵

2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են շուրջ 560.7 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված նուտքերի 98.8% կատարողական, որը հիմնականում պայմանավորված է պաշտոնական դրամաշնորհների ցածր կատարողականով: Հարկերի ու տուրքերի և այլ եկամուտների (նախկինում՝ ոչ հարկային եկամուտներ) գծով արձանագրվել է ծրագրի գերազանցում համապատասխանաբար 0.6%-ով և 25.4%-ով: Պարտադիր սոցիալական ապահովության վճարները և պաշտոնական դրամաշնորհները նույն ժամանակահատվածում զիջել են ծրագրված ցուցանիշները համապատասխանաբար 0.6⁶ և 52.4 տոկոսով: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 22.5%-ով կամ 102.9 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների աճով: 2007 թվականի ինն ամիսների համեմատ հարկերը և տուրքերն աճել են 27.4%-ով կամ 97.3 մլրդ դրամով, պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ 18.8%-ով կամ 11.9 մլրդ դրամով, իսկ պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները նվազել են համապատասխանաբար 10.8%-ով (1.5 մլրդ դրամով) և 19.1%-ով (4.8 մլրդ դրամով):

⁵ - 2008 թվականից ՀՀ պետական բյուջեն կազմվել է «Պետական ֆինանսների վիճակագրություն-2001» (GFS-2001) ձեռնարկի դասակարգմանը համապատասխան, նաև պետական բյուջեում ներառվել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն, ուստի նախորդ տարվա հետ համեմատություններում հաշվի են առնել նշված փոփոխությունները:


- 2008 թվականին արտահանողներին ԱԱՀ-ի վերադարձի գումարներն արտացոլվել են ծախսերում, ի տարբերություն նախորդ տարվա, եթե դրանք պակասեցվում էին եկամուտներից, ուստի երկու տարիների ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նկատառումով 2007 թվականի եկամուտների և ծախսերի ցուցանիշներն ավելացվել են նշված գումարի չափով (9276.7 մլն դրամ):

⁶ Աշխատող քաղաքացիների մահվան դեպքում թաղման նպաստի, հղուության և ծննդաբերության նպաստի ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարումները հիմնականում կատարվում են տեղերում՝ ապահովադիրների կողմից, պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվին, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է հունվար-օգոստոս ժամանակահատվածի համար:



Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ պետական բյուջեի եկամուտներում 3.1 տոկոսային կետով աճել է հարկերի և տուրքերի տեսակարար կշիռը, իսկ պարտադիր սոցիալական ապահովության վճարների, պաշտոնական դրամաշնորհների և այլ հարկային եկամուտների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 0.4, 0.8, և 1.9 տոկոսային կետով:

Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը




Հարկային եկամուտներ


2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են շուրջ 436.2 մլրդ դրամ՝ ապահովելով ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրի 100.8%-ը և բյուջեի եկամուտների

77.8%-ը: Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ⁷ պետական բյուջեի հարկային եկամուտների աճը կազմել է 28.5% կամ 96.9 մլրդ դրամ: Ընդ որում, բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է մուտքերի աճ, բացառությամբ պարզեցված հարկի և այլ հարկային եկամուտների, իսկ աճի հիմնական աղբյուր են հանդիսացել ավելացված արժեքի հարկը, մաքսատուրքը և շահութահարկը:

Հարկատեսակների ներդրումը հարկային եկամուտների աճի մեջ



Հարկային եկամուտների կառուցվածքը



⁷ Հանքարդյունահանման լիցենզատուների և հանքարդյունահանման հատուկ լիցենզատուների կողմից վճարվող ռոյալիթին և կրնցեսիոն վճարները, որոնք 2007 թվականին հաշվառվում էին որպես ոչ հարկային եկամուտներ, 2008 թվականին ներառվել են հարկային եկամուտներում, ուստի 2007 և 2008 թվականների ցուցանիշների համարելիությունն ապահովելու նպատակով 2007 թվականի ցուցանիշներում նույնագել կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Հարկային եկամուտների միջին ամսական մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շուրջ 10.8 մլրդ դրամով ավելացել է և կազմել 48.5 մլրդ դրամ:

Հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեն է մուտքագրվել ավելի քան 229.5 մլրդ դրամ՝ ավելացված արժեքի հարկ՝ ապահովելով հարկային եկամուտների 52.6%-ը՝ նախորդ տարվա 50.8%-ի դիմաց: Ավելացված արժեքի հարկի մուտքերից ավելի քան 147.7 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 81.8 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: 2008 թվականի ինն ամիսների համեմատ ավելացված արժեքի հարկի մուտքերն աճել են 33.3%-ով կամ շուրջ 57.3 մլրդ դրամով: Մասնավորապես՝ ներքին շրջանառությունից ապահովված մուտքերն ավելացել են 10%-ով կամ 7.5 մլրդ դրամով, իսկ մաքսային սահմանին գանձված գումարը՝ 50.9%-ով կամ 49.8 մլրդ դրամով:

Հահութահարկի գծով հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեն է մուտքագրվել շուրջ 65.9 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 15.1%-ը՝ նախորդ տարվա 16.5%-ի դիմաց: 2007 թվականի հաշվետու ժամանակահատվածում համեմատ շահութահարկն աճել է 17.9%-ով կամ շուրջ 10 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է ոչ պետական կազմակերպությունների, նվազագույն շահութահարկի վճարման պահանջից ելնելով՝ մեկ տոկոս դրույքաչափով վճարումների, ինչպես նաև ֆինանսավարկային կազմակերպությունների վճարած շահութահարկի աճով: Նախորդ տարվա համեմատ որոշ չափով ավելացել են նաև մյուս աղբյուրներից ստացված շահութահարկի գումարները, բացառությամբ պետական և օտարերկրյա կազմակերպությունների վճարումների:

Հաշվետու ժամանակահատվածում *եկամուտահարկի* գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 38.6 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 8.9%-ը՝ նախորդ տարվա 9.3%-ի դիմաց: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ եկամուտահարկն աճել է 22.2%-ով կամ ավելի քան 7 մլրդ դրամով: Վերջինս հիմնականում ապահովվել է աշխատանքային և քաղաքացիական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտների աճի հաշվին, որը կազմել է 22.4% կամ 6.6 մլրդ դրամ:

Աղցիզային հարկն ապահովել է պետական բյուջեի հարկային եկամուտների 7.9%-ը՝ 0.8 տոկոսային կետով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Այս հարկատեսակից հաշվետու ինն ամիսների ընթացքում պետական բյուջեն է մուտքագրվել ավելի քան 34.3 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 24.8 մլրդ դրամ, որից 11.8 մլրդ դրամը՝ բենզինի ու դիզելային

վառելիքի, 9.6 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի ակցիզային հարկի մուտքերը կազմել են շուրջ 9.6 մլրդ դրամ, որից 4.7 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ ակցիզային հարկն ավելացել է 16.4%-ով կամ ավելի քան 4.8 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է վառելիքի և ծխախոտի ներմուծումից և տեղական արտադրության ծխախոտի իրացումից ստացված մուտքերի աճով: Ակցիզային հարկի աճ է արձանագրվել նաև ներմուծվող ալկոհոլային խմիչքների գծով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 26.2 մլրդ դրամ *մաքսսատուրք՝* ապահովելով հարկային եկամուտների 6%-ը՝ նախորդ տարվա 4.5%-ի դիմաց: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն ավելացել են 72.4%-ով կամ ավելի քան 11 մլրդ դրամով:

2008 թվականի ինն ամիսների ընթացքում գործունեության առանձին տեսակների համար օրենքով սահմանված *հաստատագրված վճարների գծով* պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 14.6 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 3.3%-ը՝ նախորդ տարվա 3.8%-ի դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է հաստատագրված վճարների 11.2% աճ, որը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների գազալցման, առևտրի իրականացման վայր կազմակերպելու, խաղատների գործունեության, հանրային սննդի ոլորտում գործունեության կազմակերպումից, ինչպես նաև առևտրական գործունեությունից ստացված մուտքերի աճով: Մասնավորապես, հաստատագրված վճարների աճի 51.3%-ն ապահովվել է ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեությունից ստացված մուտքերի հաշվին, որոնք ավելացել են 20.6%-ով և կազմել ավելի քան 4.5 մլրդ դրամ: Միաժամանակ նվազել են տրանսպորտային գործունեության և վիճակախաղերի կազմակերպման համար գանձված գումարները:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 7.4 մլրդ դրամ *բնօգտագործման և բնապահպանական վճարներ:* Մասնավորապես՝ 4.2 մլրդ դրամ են կազմել բնապահպանական վճարները, 3.2 մլրդ դրամ՝ բնօգտագործման վճարները: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ բնապահպանական և բնօգտագործման վճարներից պետական բյուջեի մուտքերն աճել են 21.8%-ով կամ 1.3 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է օգտակար հանածոների արդյունահանման համար գանձված վճարների, ինչպես նաև այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից ՀՀ օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու և

շրջակա միջավայրին վճառ պատճառող ներմուծվող ապրանքների համար մաքսային մարմինների կողմից գանձված բնապահպանական վճարների ավելացմամբ: Նախորդ տարվա համեմատ որոշ վճարների գծով արձանագրվել է նաև մուտքերի անկում: Մասնավորապես՝ 41.2%-ով նվազել են ավտոտրանսպորտից արտանետվող վճառակար նյութերի համար գանձվող բնապահպանական վճարները և 16.6%-ով՝ ջրօգտագործման վճարները: Վերջինիս վրա ազդեցություն է ունեցել գործող արտոնությունների տարածումը խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպությունների ու տեղական ինքնակառավարման մարմինների վրա: «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 864 որոշմամբ մակերևութային (բացառությամբ Սևանա լճի) ջրերի օգտագործման և խմելու համար պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման յուրաքանչյուր խորանարդ մետրի համար սահմանված են եղել համապատասխանաբար 0.5 դրամ և 1 դրամ ջրօգտագործման վճարներ: Նշված գործունեությունների մասով բացառություն են կազմել միայն ՀՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի և Երևանի քաղաքապետարանի կողմից 50 տոկոս և ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր տնօրինող ջրամատակարարման և ջրահեռացման գործունեություն իրականացնող ընկերությունները, որոնց համար սահմանված են եղել համապատասխանաբար 0.025 դրամ և 0.05 դրամ ջրօգտագործման վճարներ: Կատարված փոփոխությամբ, որն ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 26-ից, բացառություն են կազմել ոչ միայն ջրամատակարարման և ջրահեռացման գործունեություն իրականացնող վերոնշյալ ընկերությունները, այլ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպություններն ու տեղական ինքնակառավարման մարմինները:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 4.9 մլրդ դրամ պարզեցված հարկ՝ ապահովելով հարկային եկամուտների 1.1%-ը: Նշված գումարից ավելի քան 4 մլրդ դրամը ստացվել է խանութների և կրապակների միջոցով իրականացվող առևտրական գործունեությունից, 42.1 մլն դրամը՝ նոտարական գործունեությունից, 846.1 մլն դրամը՝ գործունեության այլ տեսակներից: Նախորդ տարվա ինն ամիսների համեմատ պարզեցված հարկը նվազել է 30.4%-ով կամ ավելի քան 2.1 մլրդ դրամով՝ պայմանավորված «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ, որով 2008 թվականի հունվարի 1-ից կրճատվել են պարզեցված հարկի գործունեության տեսակները, ինչպես նաև նախատեսվել են սահմանափակումներ առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեն են մուտքագրվել շուրջ 2.9 մլրդ դրամ ճանապարհային վճարները, որոնք 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 87.8%-ով կամ ավելի քան 1.3 մլրդ դրամով: Առ հիմնականում տեղի է ունեցել ի հաշիվ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով, այդ թվում՝ ծանրաքաշ տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար գանձված վճարների:

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով հաշվետու տարում պետական բյուջեն է մուտքագրվել 2.9 մլրդ դրամ, որը շուրջ 8 անգամ գերազանցել է կանխատեսված մուտքերը՝ պայմանավորված ռադիոհաճախականության օգտագործման թույտվության տրամադրման դիմաց վճարի բարձր ցուցանիշով, որը կանխատեսված 60 մլն դրամի դիմաց կազմել է շուրջ 2.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներն աճել են 76.9%-ով կամ շուրջ 1.3 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում *ռոյալթիի և կոնցեսիոն վճարների* գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են համապատասխանաբար 4.8 և 2.1 մլրդ դրամ՝ նախատեսված համապատասխանաբար 2.97 մլրդ դրամի և 55 մլն դրամի դիմաց: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են համապատասխանաբար 60.2%-ով և 463.7%-ով:

2008 թվականին պետական բյուջեն են մուտքագրվել ավելի քան 2 մլրդ դրամ *այլ հարկային եկամուտներ՝ 2.8%-ով կամ 58.6 մլն դրամով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:* Այս մուտքերի կազմում 9.6%-ով նվազել են հարկային օրենսդրությունը խախտելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տույժերի ու տուգանքների համար գանձված գումարները:

Պետական տուրք

2008 թվականի ինն ամիսների ընթացքում *պետական տուրքը* կազմել է շուրջ 16.6 մլրդ դրամ՝ ապահովելով բյուջեի եկամուտների 3%-ը՝ նախորդ տարվա 3.5%-ի դիմաց: **Պետական տուրքի փաստացի մուտքերը 3.5%-ով կամ շուրջ 603.3 մլն դրամով զիջել են ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը:** Ծրագրի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է այլ ծառայությունների և գործողությունների, պետական գրանցման, հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների, գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների,

ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողության համար գանձվող տուրքերի ցածր ցուցանիշներով, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 94.2%, 87.5%, 89% և 78.6%: Միևնույն ժամանակ, որոշ տուրքերի գծով արձանագրվել են կանխատեսվածից բարձր ցուցանիշներ: Մասնավորապես, ծրագիրը գերազանցել են ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի տրամադրման (12.8%-ով), դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների (6.5%-ով), ՀՀ քաղաքացիություն ստանալու և ՀՀ քաղաքացիությունը փոխելու համար (4.9%-ով) և լիցենզավորման (2.7%-ով) համար գանձված տուրքերը:

Պետական տուրքերում մեծ տեսակարար կշիռ ունեն այլ ծառայությունների և գործողությունների համար կատարված վճարները, որոնք կազմել են ավելի քան 6.3 մլրդ դրամ՝ կանխատեսված 6.7 մլրդ դրամի դիմաց: Խմբում արձանագրված՝ ծրագրվածից ցածր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի համար գանձվող մուտքերով, որոնք կազմել են 5.5 մլրդ դրամ՝ 8.9%-ով զիջելով ծրագիրը, բայց միևնույն ժամանակ 8.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական տուրքերում մեծ կշիռ ունեն նաև լիցենզավորման, պետական գրանցման, ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների իրականացման համար գանձված տուրքերը, որոնք համապատասխանաբար կազմել են 2.8, 2.5, 2.4 և 1.5 մլրդ դրամ:

2007 թվականի ինն ամիսների համեմատ պետական տուրքերն ավելացել են 2.7%-ով կամ 441.2 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար վճարված տուրքերի (8.1%-ով), ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի տրամադրման (20.9%-ով), լիցենզավորման (14.7%-ով), ինչպես նաև դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների դեմ տրվող վճռաբեկ գանգատների (46%-ով) համար վճարված տուրքերի ավելացմամբ:

Միևնույն ժամանակ, որոշ տուրքերի գծով արձանագրվել է մուտքերի անկում: Մասնավորապես՝ պետական գրանցման, մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայական տալու, գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ

միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողության համար, ինչպես նաև հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների իրականացման համար վճարված տուրքերը նվազել են համապատասխանաբար 28.5%-ով, 21.5%-ով, 4.3%-ով և 0.8%-ով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ

2008 թվականի ինն ամիսներին պարտադիր սոցիալական ապահովության վճարներից բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 75.3 մլրդ դրամ և իննամյա ծրագիրը ապահովել 99.4%-ով: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 18.8%-ով կամ շուրջ 11.9 մլրդ դրամով:

Պաշտոնական դրամաշնորհներ

2008 թվականի ինն ամիսների ընթացքում արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 12.1 մլրդ դրամ պաշտոնական տրանսֆերտներ՝ կազմելով իննամյա ծրագրի 47.6%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով, որի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում նախատեսված 14.9 մլրդ դրամի դիմաց ստացվել է 3.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 23.8%-ը: 50%-ով է ստացվել Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար նախատեսված դրամաշնորհը՝ կազմելով ավելի քան 2.3 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության ու Սեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Սիացյալ Թագավորության միջև ստորագրված՝ աղքատության հաղթահարման նպատակով բյուջեին աջակցության մասին փոխսրմբոնման հուշագրի շրջանակներում իննամյա ծրագրով նախատեսված 494.2 մլն դրամ դրամաշնորհից ստացվել է 266 մլն դրամը, Շապոնիայի կառավարությունից նախատեսված 650 մլն դրամից ստացվել է 341.6 մլն դրամը, իսկ Գեղարքունիքի և Տավուշի մարզերի գարգացման ծրագրերի ֆինանսավորման նպատակով Սեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Սիացյալ Թագավորության կողմից տրամադրվել է շուրջ 118.8 մլն դրամ, որը կազմում է իննամյա ծրագրի 95.2%-ը: Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեում նախատեսված դրամաշնորհներից չեն ստացվել Գերմանիայի զարգացման վարկերի

բանկի աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ պետական հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների իրականացման և ճապոնական սոցիալական զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ համատիրությունների վրա հիմնված քաղաքային ջրամատակարարման և ջրահեռացման կառավարման բարելավման ծրագրերի շրջանակներում նախատեսված դրամաշնորհները՝ շուրջ 1.8 մլրդ դրամ ընդհանուր գումարով: Միևնույն ժամանակ, հաշվետու ժամանակահատվածում Լինսի հիմնադրամից ստացվել են դրամաշնորհներ 3.6 մլրդ դրամ ընդհանուր գումարով, որոնք պետական բյուջեում չեն նախատեսվել: Նշված գումարն ուղղվել է Երևանի փողոցների վերանորոգման, կրթական հաստատությունների վերականգնման և ճանապարհների վերանորոգման ծրագրերի ֆինանսավորմանը: Ավելի քան 1.6 մլրդ դրամ է ստացվել մի շարք այլ նպատակային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 65.7%-ը: Հաշվետու ժամանակահատվածում ևս 179.1 մլն դրամ կազմել են պետական հիմնարկների արտարյուջետային հաշիվներին մուտքագրված դրամաշնորհները:

2007 թվականի ինն ամիսների համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերը նվազել են 10.8%-ով:

Այլ եկամուտներ

Պետական բյուջեի այլ եկամուտները 2008 թվականի ինն ամիսներին կազմել են 20.6 մլրդ դրամ, որը կազմում է բյուջեի եկամուտների 3.7%-ը՝ նախորդ տարվա 5.5%-ի դիմաց: Այն գերազանցել է իննամսյա ծրագրային ցուցանիշը (16.4 մլրդ դրամ) 25.4%-ով, որը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների բարձր ցուցանիշով, որը նախատեսված 191.7 մլն դրամի դիմաց կազմել է ավելի քան 4.3 մլրդ դրամ: Բացի այդ, մյուս եկամտատեսակների գծով ևս արձանագրվել է ծրագրի գերազանցում, բացառությամբ տիրագործ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից մուտքերի, ինչպես նաև օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների, որոնց

իննամսյա ծրագրի կատարողականը կազմել է համապատասխանաբար 87.2% և 90.3%: Վերջինս հիմնականում պայմանավորված է նրանով, որ «Արմավիա» ՍՊԸ-ի կողմից օդուղիների հատկացման դիմաց նախատեսված 325.2 մլն դրամ գումարը չի ստացվել, իսկ ռադիոհաճախականության օգտագործման դիմաց ստացված վճարների կատարողականը կազմել է 20.8%:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը նախատեսված 70 մլն դրամի դիմաց կազմել են 500.1 մլն դրամ: Ծրագիրը 2.6 անգամ գերազանցել են իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինները՝ կազմելով 737 մլն դրամ:


2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 19.1%-ով կամ 4.8 մլրդ դրամով: Վերջինս պայմանավորված է 2007 թվականին «Արմենթել» ՓԲԸ-ի հետ կնքված հաշտության համաձայնությամբ վճարված գումարով, որը կազմել էր 4.6 մլրդ դրամ և «Զանգեզուրի ՊՍԿ» ՓԲԸ-ի մասնավորեցման արդյունքում պետական բյուջե փոխանցված գումարով, որը կազմել էր 6.8 մլրդ դրամ: Առանց նշված գումարները հաշվի առնելու 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտների աճը կազմում է 47.4% կամ 6.6 մլրդ դրամ, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների արտաքյուջետային մուտքերի, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների և իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերի աճով:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՄԵՐԸ

2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 570.7 մլրդ դրամ ծախսեր: Մասմակորապես՝ շուրջ 468.5 մլրդ դրամ կազմել են ընթացիկ ծախսերը, 102.2 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Պետական բյուջեի ծախսերի իննամսյա ծրագիրը կատարվել է 87.1%-ով, ընդ որում, թերօգտագործման 65.4%-ը բաժին է ընկել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին: Բյուջետային ծախսերի արձանագրված կատարողականը մասամբ արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականի հետևանք է: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում սահմանված կարգով գրանցված բոլոր պարտավորությունները ֆինանսավորվել են:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի՝ իննամսյա ծրագրից զգալի շեղման արդյունքում բյուջեի ծախսերի կառուցվածքը որոշակիորեն տարբերվում է ծրագրով սահմանված համամասնություններից. ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռը 5.2 տոկոսային կետով զերազանցել է նախատեսված ցուցանիշը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների տեսակարար կշիռը՝ նույնքան զիջել ծրագրված ցուցանիշը:

ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը



Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 26.4%-ով, որը կազմում է 119.2 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ընթացիկ ծախսերի իննամյա ծրագիրը կատարվել է 93%-ով: Ընթացիկ ծախսերից 43 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը՝ կազմելով ծրագրի 93.1%-ը: Չուրջ 3.2 մլրդ դրամ է տրամադրվել պարտադիր սոցիալական ապահովության վճարներին՝ կազմելով ծրագրի 87%-ը: Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 91.6 մլրդ դրամ, որը կազմում է ծրագրի 90.1%-ը: Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 8.7 մլրդ դրամ է տրամադրվել պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով իննամյա ծրագրի 95.9%-ը: Մասնավորապես՝ 6.1 մլրդ դրամ տրամադրվել է ներքին, 2.6 մլրդ դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը, որոնք կազմել են ծրագրի համապատասխանարար 94.3 և 99.9 տոկոսը: Ներքին պարտքի սպասարկման ծախսերում արձանագրված 365.6 մլն դրամ տնտեսումից 364.3 մլն դրամը գանձապետական պարտատոմսերի գծով է: Հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում տոկոսավճարի խնայողությունը պայմանավորված էր ուղենչային միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի առաջին կիսամյակում ծրագրված ծավալի թերտեղաբաշխմամբ, որի հետևանքով օգոստոս ամսին վճարվող սպասարկման ծախսերի ծավալը փաստացի ավելի քիչ կազմեց: Բացի այդ, հետզհումների քաղաքականությունն ըստ ամիսների կառուցվել է այնպես, որ մոտ 12 մլրդ դրամ ծավալով հետզհուած պարտատոմսերի դիմաց վճարվել է ընդամենը 1 մլրդ դրամ սպասարկման ծախս՝ նախատեսված 1.3 մլրդ դրամի փոխարեն: 2007 թվականի նոյեն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 17.8%-ով, այդ թվում՝ ներքին պարտքի սպասարկման ծախսերի աճը կազմել է 24.9%, արտաքին պարտքի սպասարկման ծախսերինը՝ 3.7%:

Անցած ինն ամիսների ընթացքում պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 16.5 մլրդ դրամ սուրսիդիաներ՝ կազմելով ծրագրի 96.5%-ը, որի գերակշռող մասը՝ 15.8 մլրդ դրամը, կազմել են պետական կազմակերպություններին տրված սուրսիդիաները:

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 12.9%-ը կամ 60.6 մլրդ դրամ կազմել են դրամաշնորհները, որոնք ապահովել են ծրագրի 94.4%-ը: Շեղումը, որը կազմել է 3.6 մլրդ դրամ, առաջացել է հիմնականում պետական հատվածի այլ մակարդակներին տրամադրվող ընթացիկ և կապիտալ դրամաշնորհների ծախսերում: Հաշվետու ժամանակահատվածում 15.7 մլրդ դրամ տրամադրվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Նախորդ տարվա նոյեն ժամանակահատվածի համեմատ դոտացիաների ծախսերն ավելացել են 18.8%-ով կամ 2.5 մլրդ դրամով: Ամբողջությամբ ֆինանսավորվել են նաև օտարերկրյա կառավարություններին նախատեսված դրամաշնորհները, որոնք կազմել

են 690.7 մլն դրամ, որից 281 մլն դրամը ընթացիկ դրամաշնորհներն են, 409.7 մլն դրամը՝ կապիտալ: 99.1%-ով կատարվել է միջազգային կազմակերպությունների դրամաշնորհների ֆինանսավորումը, որը կազմել է շուրջ 1.2 մլրդ դրամ, որից 673.3 մլն դրամն ընթացիկ դրամաշնորհներն են, 484.4 մլն դրամը՝ կապիտալ դրամաշնորհները: Մնացած դրամաշնորհների գծով արձանագրվել են ծրագրից որոշակի շեղումներ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 33%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաքոչակներին, որոնք կազմել են 154.5 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրի 97.4%-ը: Մասնավորապես, 114.7 մլրդ դրամ տրամադրվել է կենսաքոչակներին, 39.8 մլրդ դրամ՝ նպաստներին՝ ապահովելով ծրագրի համապատասխանաբար 98%-ը և 95.8%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում 93.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 87.6%-ը տրամադրվել է այլ ծախսերին:

2008 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 102.2 մլրդ դրամ կամ ծրագրի 67.4%-ը: Մասնավորապես, 114.3 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ ապահովելով ծրագրի 67.4%-ը: Շեղումը կազմել է 55.2 մլրդ դրամ, որի 40%-ից ավելին արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում չօգտագործված միջոցներն են: Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 12.1 մլրդ դրամ՝ ծրագրի կատարումն ապահովելով 67.4%-ով:

Գործառական դասակարգում

2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում բնորհանոր բնույթի համրային ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 76.3 մլրդ դրամ՝ 89.4%-ով ապահովելով իննամսյա ծրագրի կատարումը: Շեղման զգալի մասն առաջացել է «Ֆինանսական և հարկարյուջետային հարաբերություններ», «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» և «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասերում: Այն մասամբ պայմանավորված է տվյալ բաժնում ընդգրկված՝ արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով:

Հաշվետու ժամանակահատվածում օրենսդիր և գործադիր մարմինների ու պետական կառավարման ծախսերը կազմել են ավելի քան 8.2 մլրդ դրամ՝ ապահովելով

նախատեսված ծախսերի 87.1%-ը: Այս դասում տնտեսումը կազմել է ավելի քան 1.2 մլրդ դրամ:

Ֆինանսական և հարկարյութետային հարաբերությունների ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավելի քան 28.1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 90.8%-ը: Տնտեսումները, որոնք կազմել են շուրջ 2.9 մլրդ դրամ, հիմնականում առաջացել են ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության և մաքսային պետական կոմիտեի նյութական խրախուսման և սոցիալական զարգացման ֆոնդերի ծախսերում: Բացի այդ, այս դասում նախատեսված՝ Համաշխարհային քանկի աջակցությամբ իրականացվող երեք դրամաշնորհային ծրագրերի գծով վճարումներ չեն կատարվել: Դրանք են՝ «Օտարերկրյա ներդրումների և արտահանման աջակցության երկրորդ դրամաշնորհային ծրագիրը», «Պետական պարտքի կառավարման դրամաշնորհային ծրագիրը» և «Վիճակագրական Մաստեր-պլանի մշակում և տեխնիկական աջակցություն վիճակագրական կարողությունների ուժեղացման միջոցով դրամաշնորհային ծրագիրը»: Սիածամանակ, շուրջ 40.3 մլն դրամի ծախսեր են իրականացվել Համաշխարհային քանկի աջակցությամբ իրականացվող Հանրային հատվածի ներքին առողջական իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որն ընթացիկ տարվա պետական բյուջեում նախատեսված չէ:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 5.5 մլրդ դրամ է տրամադրվել արտաքին հարաբերությունների ծրագրերին, որը կազմել է ծրագրային հատկացումների 92.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է դեսպանությունների շենքերի գնման, արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների ցածր կատարողականով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարման ծախսերը չկատարելու հանգամանքով:

Ընդհանուր բնույթի ծառայությունների խմբի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 67.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ հաշվետու ժամանակահատվածում էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման գծով պետական պատվերի ծրագրի շրջանակներում նախատեսված 455 մլն դրամի վճարումները չեն իրականացվել: Մի շարք այլ ծրագրերի գծով ևս արձանագրվել են շեղումներ, մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական զարգացման ծրագրի գծով, որի կատարողականը կազմել է 23.3% (18.7 մլն դրամ):

2008 թվականի ինն ամիսների ընթացքում ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանքներին տրամադրվել է 3 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 84.7%-ը: Ըեղումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով: Ծրագրի շրջանակներում կատարվել է նախատեսված ծախսերի 18%-ը՝ կազմելով 100.5 մլն դրամ: Բացի այդ, որոշակի շեղումներ են արձանագրվել նաև նշված խմբում ընդգրկված մի շարք այլ ծրագրերի ծախսերում:

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներին տրամադրվել է ավելի քան 1.8 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրային հատկացումների 91.6%-ը: Ըեղումը հիմնականում պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականով, որոնք կազմել են 711.7 մլն դրամ կամ նախատեսվածի 82.2%-ը:

Այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին տրամադրվել է շուրջ 4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային հատկացումների 58.7%-ը: Ըեղումը հիմնականում առաջացել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսերի ծրագրերում: Մասնավորապես՝ պետական հատվածի բարեփոխումների ծրագրի ծախսերը կազմել են 421.8 մլն դրամ կամ նախատեսվածի 21.8%-ը, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ծախսերը՝ 250 մլն դրամ կամ 30.5%, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսերը՝ 1.4 մլրդ դրամ կամ 80.3%: «Գեղեգիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈՍԿ-ի կողմից պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքների իրականացման պետական պատվերը կատարվել է 25.5%-ով: Հաշվետու ժամանակահատվածում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող գանձապետական համակարգի երկրորդ սերնդի բարեփոխումների և պետական հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում վճարումներ չեն իրականացվել:

Պետական պարտքի գծով գործառնություններին տրամադրվել է ավելի քան 8.1 մլրդ դրամ, որը կազմում է ինն ամիսների ծրագրային հատկացումների 95.7%-ը:

Խնայողությունների զգալի մասն առաջացել է ՀՀ պետական արժեքութերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկման ծախսերի գծով, որոնք կազմել են շուրջ 5.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 93.9%-ը: 2.6 մլրդ դրամ է տրամադրվել արտաքին պարտքի սպասարկմանը՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը, 2.1 մլն դրամ՝ մուրհակների սպասարկմանը, որոնք կազմել են ծրագրվածի 63.2%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից համայնքներին տրամադրվել են 16.2 մլրդ դրամ տրանսֆերտներ՝ գրեթե ամբողջությամբ ապահովելով ծրագիրը: Նշված գումարից 16 մլրդ դրամ կազմել են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարբեցման սկզբունքով տրամադրվող դրագիաները և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ծախսերը, 79.7 մլն դրամ՝ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին տրամադրված սուբվենցիաները, 100 մլն դրամ՝ Երևան քաղաքի Ավան թաղային համայնքին պետական աջակցությունը:

Հաշվետու ժամանակահատվածում պաշտպանության բնագավառին տրամադրվել է ավելի քան 85.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 95.4%-ով կատարում: Մասնավորապես՝ 82.7 մլրդ դրամ հատկացվել է ուազմական պաշտպանությանը, 2.7 մլրդ դրամ՝ այլ դասերին չպատկանող պաշտպանական ծախսերին, 262.9 մլն դրամ՝ պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներին և 69.6 մլն դրամ՝ արտաքին ուազմական օգնությանը: Տնտեսումների զգալի մասն արձանագրվել է ուազմական կարիքների բավարարման ծախսերում:

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառին 2008 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 40.9 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրի 84.9% կատարողական: Ընդ որում, բաժնի բոլոր հինգ խմբերում առկա են ծրագրից շեղումներ, որոնց զգալի մասը բաժին է ընկել ոստիկանության և ազգային անվտանգության դասերին: Նշված բաժնի ծախսերի 67.4%-ն ուղղվել է հասարակական կարգի և անվտանգության պահպանության, 5.1%-ը՝ փրկարար ծառայության, 12%-ը՝ դատական գործունեության և իրավական պաշտպանության, 3.8%-ը՝ դատախազության, 11.9%-ը՝ կալանավայրերի ծախսերի ֆինանսավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 27.5 մլրդ դրամ տրամադրվել է հասարակական կարգի և անվտանգության բնագավառի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 82.7%-ը: Նշված գումարից ավելի քան 19.6 մլրդ դրամ տրամադրվել է

ոստիկանությանը, 7.9 մլրդ դրամ՝ ազգային անվտանգությանը, որոնց կատարողականը նույնապես կազմել է 82.7%: Փրկարար ծառայության ծախսերը կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 92%-ով կատարում:

Դատական գործութեանության և իրավական պաշտպանության ոլորտի ծրագրերին տրամադրվել է շուրջ 4.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 87.4%-ով կատարում: Շեղումը հիմնականում առաջացել է դատական իշխանության մարմինների պահպանման և դրամաշնորհային ծրագրերի ծախսերում: Այս դասում ընդգրկված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ‘Դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագիրը, որի շրջանակներում կատարվել են 1.3 մլրդ դրամի ծախսեր՝ 11.7%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Միևնույն ժամանակ, նույն ծրագրում ճապոնական դրամաշնորհի հաշվին նախատեսված ծախսերը կատարվել են 88.8%-ով՝ կազմելով 281.5 մլն դրամ, իսկ հոլանդական դրամաշնորհի հաշվին նախատեսված ծրագիրը չի իրականացվել: Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 183.6 մլն դրամ են կազմել իրավական պաշտպանության ծախսերը՝ ապահովելով 94.1% կատարողական: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերում:

Դատախազության ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 1.5 մլրդ դրամ կամ ծրագրի 85.8%-ը:

Կալանավայրերի պահպանմանը հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է շուրջ 4.9 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 92.7%-ը:

Տնտեսական հարաբերությունների բաժնի ծախսերը 2008 թվականի ինն ամիսներին կազմել են ավելի քան 61.4 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրի 72.5%-ը: Ընդ որում, բոլոր խմբերում արձանագրվել է ծրագրվածից ցածր կատարողական, բացառությամբ կապի: Հատկացված ֆինանսական միջոցները հիմնականում ուղղվել են երեք բնագավառների՝ տրանսպորտի (52.3%), գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որտորության (28.5%) և վառելիքի ու էներգետիկայի (17%) ծրագրերի ֆինանսավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների խմբի ծախսերը կազմել են ավելի քան 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրի 83% կատարողական: Խմբում ընդգրկված 16 ծրագրերից վճարումներ են կատարվել 12-ի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 89.3%-ը, իսկ մնացած 4 ծրագրերի համար հատկացված միջոցները չեն օգտագործվել: Դրանք են՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ստանդարտացման աշխատանքների կատարմանը և «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից չափումների միասնականության ապահովման աշխատանքների կատարմանը պետական

աջակցությունը, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագիրը և Գյումրու Տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության ծրագիրը: Խմբի ծախսերում 533.8 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման համար օգտագործված միջոցները (այդ թվում՝ արտարյուջետային)` ապահովելով ծրագրի 87.6%-ը: Խմբի 4 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական, այդ թվում՝ «Հայաստանի հիդրոոլերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ին պետական աջակցությունը (280.6 մլն դրամ), տնտեսական գործունեության արդյունավետ վարման և աջակցման միջոցառումների իրականացումը (104.7 մլն դրամ), Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագիրը (348 մլն դրամ) և «Ապրանքային շրջանառության բնագավառում մրցակցային խնդիրներ» արտարյուջետային դրամաշնորհային ծրագիրը (1.9 մլն դրամ):

Խմբում ընդգրկված որոշ ծրագրեր ունեցել են ցածր կատարողական: Մասնավորապես՝ հիդրոոլերևութաբանական կայանների տեխնիկական վերագինման նպատակով օգտագործվել է 15.9 մլն դրամ կամ նախատեսվածի 58.9%-ը, արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծախսերը կազմել են 44.5 մլն դրամ կամ նախատեսվածի 69.7%-ը, իսկ Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ անդամակցային պարտավորությունների իրականացման ծախսերը կազմել են 12.3 մլն դրամ կամ նախատեսվածի 56.7%-ը: ՀՀ տեխնիկական կանոնակարգերի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական և վարչական օբյեկտների հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում ծախսվել է համապատասխանաբար 600 հազ. և 640 հազ. դրամ կամ նախատեսվածի 1.4 և 12.3 տոկոսը:

2008 թվականի ինն ամիսների ընթացքում գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնարուծության և որտորդության բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 17.5 մլրդ դրամ կամ ծրագրի 71.1%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ոռոգման և գյուղատնտեսության բնագավառներում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով:

Հաշվետու ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտի ծախսերը կազմել են ավելի քան 8 մլրդ դրամ կամ ծրագրվածի 83.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի

աջակցությամբ իրականացվող «Ծուկայական հնարավորություն ֆերմերներին», Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թոշնագրիպին հակազդելու վարկային ծրագրերի, ինչպես նաև բնական կերիանդակների (արտների) բարելավման և ջրարբիացման և գյուղատնտեսական հողատեսքերի պահպանման, բարելավման ու ինժեներական կառուցվածքների վերականգնման աշխատանքների ցածր կատարողականով:

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 30 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են իինգ վարկային և չորս դրամաշնորհային ծրագրեր: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով 100.8% կատարողական, իսկ նույն վարկային ծրագրին աջակցելու նպատակով տրամադրված ճապոնական դրամաշնորհի հաշվին կատարված ծախսերը կազմել են 115.8 մլն դրամ կամ նախատեսվածի 90.4%-ը: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թոշնագրիպին հակազդելու վարկային ծրագրի շրջանակներում վճարումները կատարվել են 36.3%-ով՝ կազմելով 157.6 մլն դրամ, Թոշնագրիպին հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագրով կատարված ծախսերը կազմել են 26.1 մլն դրամ կամ նախատեսվածի 60.6%-ը, իսկ Թոշնագրիպին հակազդելու ծրագրի համաֆինանսավորման ճապոնական դրամաշնորհային ծրագրի վճարումները կատարվել են 66.5%-ով՝ կազմելով 114.9 մլն դրամ: Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ծուկայական հնարավորություն ֆերմերներին» վարկային ծրագրի գծով կատարված ծախսերը կազմել են 432.9 մլն դրամ՝ ապահովելով 44.1% կատարողական, իսկ նույն վարկային ծրագրին աջակցելու նպատակով տրամադրված դրամաշնորհի հաշվին կատարված ծախսերը կազմել են 10.8 մլն դրամ, որոնք ՀՀ 2008 թվականի պետական բյուջեում նախատեսված չեն: Հարկ է նշել, որ «Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արտադրական ենթակառուցվածքների վերականգնում» վարկային ծրագրի գծով արձանագրվել է ծրագրի 19.7%-ով գերազանցում (նախատեսված 656.8 մլն դրամի դիմաց օգտագործվել է 786.4 մլն դրամ), իսկ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության աջակցությամբ իրականացվող Գյուղական տարածքների տնտեսական զարգացման վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 362.7 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով 126.8% կատարողական:

Գյուղատնտեսության ոլորտի ծրագրերում մեծ տեսակարար կշիռ ունեն պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին, պատվաստուկների և այլ հակահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ պարագաների ձեռք բերման ծախսերը, նշպես նաև Հայաստանի Հանրապետության տավարաբուծության զարգացման ծախսերը որոնք համապատասխանաբար կազմել են 1.6 մլրդ, 722.2 մլն և 498.8 մլն դրամ՝ 97.4%-ով, 92%-ով և 99.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը:

Նշված դասում ընդգրկված երեք ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական՝ «ՀՀ կառավարության առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացում» (9.3 մլն դրամ), «Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիթորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում» (66.8 մլն դրամ) և «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում» (138.2 մլն դրամ):

Հաշվետու ժամանակահատվածում անտառային տնտեսության ծախսերը կազմել են ավելի քան 1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 65.6%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառպահպանական, անտառվերականգնման և անտառշինական աշխատանքների իրականացման համար կատարված հատկացումները. այդ նպատակով օգտագործվել է 839.9 մլն դրամ կամ նախատեսվածի 68.5%-ը:

2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում շուրջ 8.5 մլրդ դրամ են կազմել ոռոգման բնագավառի ծախսերը՝ կազմելով ծրագրվածի 63%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պատվարների անվտանգության վարկային ծրագրի և ոռոգման համակարգերի հիմնանորոգման ծախսերի ցածր կատարողականով:

Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 13 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են չորս վարկային և մեկ դրամաշնորհային ծրագրեր: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պատվարների անվտանգության առաջին և երկրորդ վարկային ծրագրերի շրջանակներում ծախսվել է շուրջ 687.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 35%-ը, իսկ Ոռոգման համակարգի զարգացման առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում ծախսվել է 460.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 65.4%-ով: 38%-ով են կատարվել ԱՄՆ կառավարության

աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ծախսերը, որոնք կազմել են ավելի քան 1.9 մլրդ դրամ: Իսկ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Սիացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագրի ծախսերը կազմել են 727 հազ. դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 10.5%-ով: Հաշվետու ժամանակահատվածում գրեթե ամբողջությամբ իրականացվել է ոռոգման համակարգերի սուբսիդավորումը, որը կազմել է 4.3 մլրդ դրամ: 515.4 մլն դրամ է տրամադրվել ոռոգման համակարգերի հիմնանորոգման նպատակով՝ կազմելով նախատեսվածի 66.4%-ը: «Որոտան-Արփա-Սևան թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկի պահպանման, «Որոտան-Արփա-Սևան» ջրային համակարգի շահագործման, տեխնիկական վիճակի բարելավման և նորոգման ծրագրով նախատեսված ծախսերը կատարվել են 89.1%-ով:

Վառելիքի և էներգետիկայի բնագավառում 2008 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 10.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 71%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Մասնավորապես՝ ծախսերի 73% կատարողական է արձանագրվել ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի գծով՝ կազմելով 7.3 մլրդ դրամ, իսկ Էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման վարկային ծրագրի գծով կատարված ծախսերը կազմել են 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով 61.8% կատարողական: Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում օգտագործվել է 158.5 մլն դրամ կամ նախատեսվածի 41.7%-ը: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 209.2 մլն դրամ ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 62%-ը: Իննամյա ծրագրի գերազանցում է արձանագրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ջեռուցման ծրագրի ծախսերում, որոնք կազմել են 489.3 մլն դրամ՝ 26.1%-ով գերազանցելով նախատեսվածը:

Նախատեսված ծավալով ֆինանսավորվել են համայնքների բյուջեներին նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները, որոնք կազմել են 24.1 մլն դրամ: 156.3 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների

պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) համար օգտագործված միջոցները՝ ապահովելով ծրագրի 95.7%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից շուրջ 28.7 մլն դրամ տրամադրվել է լեռնաարդյունահանման, արդյունաքերության և շինարարության բնագավառների ծախսերին՝ կազմելով ծրագրվածի 58.7%-ը: Խսրի ծախսերի ցածր կատարողականը մեծ մասամբ պայմանավորված է երկրաբանահետախուզական աշխատանքների ցածր կատարողականով, որոնց իրականացման համար տրամադրվել է 12.3 մլն դրամ կամ նախատեսվածի 54.5%-ը: Պահուստային հանքավայրերի գույքագրման համար նախատեսված ծախսերը կատարվել են 66.1%-ով, իսկ արտաքյուջետային միջոցների հաշվին նախատեսված «Աճուրդների կազմակերպման ֆոնդ» ծրագրի ծախսերը՝ 69.6%-ով: Ամբողջությամբ տրամադրվել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին 4 մլն դրամ պետական աջակցությունը: Շինարարության ոլորտում հաշվետու ժամանակահատվածում նախատեսված 4 մլն դրամի Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը չեն կատարվել:

2008 թվականի ինն ամիսների ընթացքում *տրանսպորտի* բնագավառի ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 32.1 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրի կատարումը 67.7%-ով: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է ճանապարհային տրանսպորտի դասի ծրագրերի ցածր կատարողականով: Ճանապարհային տրանսպորտի բնագավառի ծախսերը կազմել են շուրջ 29.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրվածի 70.8%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 13 ծրագրեր, որոնցից ամբողջությամբ կատարվել են երեքը՝ համայնքների բյուջեներին սուբվենցիաների տրամադրումը (24.5 մլն դրամ), «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու շինարարությունը (409.7 մլն դրամ) և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Սիացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղաքունիքի և Տափուշի մարզերում մարզային գարգացման ծրագիրը (43 մլն դրամ): Այս դասում նախատեսված ծրագրերից երկուսի՝ Հայաստանի Հանրապետության ոչ ոեզիդենտ կազմակերպությունների կողմից գեղշ սակագնով կամ անվճար ծառայություններ մատուցելու հետևանքով չատացված եկամուտների փոխառուցման և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երթևեկության կառավարման և անվտանգության ծրագրերի գծով հաշվետու ժամանակահատվածում ծախսեր չեն իրականացվել: Սիամամանակ հարկ է նշել, որ «Լինսի» հիմնադրամի միջոցներով շարունակվել է «Երևանի փողոցների վերանորոգում» և «Ճանապարհների վերանորոգում» ծրագրերի ֆինանսավորումը (շուրջ 2 մլրդ դրամի չափով), որոնք 2008 թվականի պետական բյուջեում

նախատեսված չեն: ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ճանապարհաշինության ոլորտում հաշվետու ժամանակահատվածում ծախսվել է 1.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 13.8%-ը: 66.1% կատարողական է արձանագրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երթևեկության կառավարման և անվտանգության ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի գծով՝ կազմելով 140.2 մլն դրամ, իսկ Լինսի հիմնադրամի «Ճանապարհաշինություն» և «Երևանի փողոցների վերականգնում» ծրագրերում առաջացած ֆինանսական միջոցների պակասուրդի փոխհատուցման նպատակով տրամադրվել է 1.6 մլրդ դրամ՝ նախատեսված 2.2 մլրդ դրամի փոխարեն: Հաշվետու ժամանակահատվածում 26.6%-ով պակաս են կատարվել նաև Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը, որոնք կազմել են շուրջ 10.2 մլրդ դրամ: Իսկ պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման ու շահագործման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերը համապատասխանաբար կազմել են 8.2 մլրդ դրամ և 4.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագիրը 88.4 և 92.2 տոկոսով: Բացի վերը նշված ծրագրերից շեղումներ են արձանագրվել նաև տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման (կատարողականը՝ 44.2%) և մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման (81.4%) ծրագրերի ծախսերում:

2008 թվականի հաշվետու ժամանակահատվածում երկարուղային տրանսպորտի բնագավառում ՀՀ պետական բյուջեից կատարվել են 701.4 մլն դրամ ծախսեր՝ կազմելով նախատեսվածի 18.7%-ը, որը հիմնականում պայմանավորված է Ասիական գարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ցածր կատարողականով: Վերջինիս շրջանակներում օգտագործվել է 436.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 13.2%-ը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ աջակցությամբ իրականացվող Երկարուղու կառուցվածքային բարեփոխումների վարկային ծրագրով նախատեսված են եղել շուրջ 81.3 մլն դրամի ծախսեր, որը, սակայն, չի օգտագործվել: Միևնույն ժամանակ, նույն ծրագրի շրջանակներում նախատեսված դրամաշնորհի հաշվին կատարված ծախսերը 2.8%-ով գերազանցել են ծրագրվածը՝ կազմելով շուրջ 193.7 մլն դրամ: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ երկարուղու կառուցվածքային ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 71.1 մլն դրամ կամ ծրագրվածի 38.5%-ը:

2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին օդային տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերում նույնապես արձանագրվել է ցածր կատարողական՝ 56% կամ 183.9 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր

քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաքյուջետային միջոցների հաշվին նախատեսված ծախսերի ցածր մակարդակով, որոնք զիջել են նախատեսվածը 57.8%-ով:

Խողովակաշարային և այլ տրանսպորտի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հատկացված գումարից ավելի քան 1.6 մլրդ դրամ տրամադրվել է Երևանի մետրոպոլիտենի, 207 մլն դրամ՝ Երևանի էլեկտրատրանսպորտի սուբսիդավորմանը:

2008 թվականի ինն ամիսների ընթացքում կայսի ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 402.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 100%-ով: Մասնավորապես՝ 329 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին և 73.2 մլն դրամ՝ Սևանի ավազանի բնակավայրերում, Դիլիջանում և Զերմուկում հեռուստահեռարձակման բարելավման միջոցառումների իրականացմանը:

Այլ բնագավառների ծախսերը կազմել են ավելի քան 823.2 մլն դրամ կամ նախատեսվածի 96%-ը: Մասնավորապես՝ զբոսաշրջության ոլորտին պետական աջակցության նպատակով ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից նախատեսվել է տրամադրել 209.3 մլն դրամ, սակայն փաստացի հատկացումները կազմել են 154.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 73.8%-ով: Միևնույն ժամանակ, 3.2%-ով գերազանցում է արձանագրվել ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող՝ «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ծախսերում, որոնք կազմել են 668.8 մլն դրամ:

2008 թվականի ինն ամիսների ընթացքում տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 90.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 67.5%-ով: Խմբում ընդգրկված են 4 ծրագրեր, որոնցից երկուսում նախատեսված հատկացումները 100%-ով կատարվել են (պետական աջակցություն «Գնագոյացման և ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ 48 մլն դրամ և «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում պետական աջակցություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության կազմակերպություններին՝ 32.5 մլն դրամ): «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների իրականացման և տեխնիկական կանոնակարգերի մշակման աշխատանքների համար տրամադրվել է 10.3 մլն դրամ կամ նախատեսվածի 26.3%-ը, իսկ օգտակար հանածոների

հանքավայրերի շահագործման գործընթացին պետական աջակցության նպատակով նախատեսված 15 մլն դրամը չի օգտագործվել:

2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին *այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների* փաստացի ցուցանիշը կազմել է -1.3 մլրդ դրամ՝ նախատեսված -5.1 մլրդ դրամի փոխարեն: Մասնավորապես՝ խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են շուրջ 10.8 մլրդ դրամ ծախսեր, և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել են 12.1 մլրդ դրամի մուտքեր: Ծրագրային և փաստացի ցուցանիշների շեղումը պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի ցածր՝ 67.4% կատարողականով: Վերջինիս ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն Երևան քաղաքում ինքնակամ կառույցների ուղղակի վաճառքից կամ աճուրդով օտարումից ստացված միջոցները, որոնք կազմել են ավելի քան 1 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 15 ծրագրեր՝ այդ թվում արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել է մեկ վարկային ծրագիր՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիրը, որի շրջանակներում ծախսվել է ավելի քան 1.5 մլրդ դրամ՝ 24.3%-ով գերազանցելով նախատեսվածը:

Այլ ծրագրերով պետական բյուջեից նախատեսված է եղել 1.8 մլրդ դրամ հատկացում, որն ամբողջությամբ կատարվել է: 2011.1 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը՝ ապահովելով ծրագրի կատարումը 89.7%-ով: Իսկ Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի շրջանակներում կատարված աշխատանքների ֆինանսավորումը կազմել է շուրջ 1.3 մլրդ դրամ, որը 12.3%-ով զիջել է նախատեսվածը: Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման և նյութական ռեսուրսների ՀՀ պետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը համապատասխանաբար կազմել են 38.8 և 43.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 83.3 և 2 տոկոսով:

Խմբում ներառվել են «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 15-րդ և 16-րդ կետերի համաձայն Երևան քաղաքում ինքնակամ կառույցների ուղղակի վաճառքից կամ աճուրդով օտարումից և օրինականացումից ստացված միջոցների հաշվին կատարված քանդման ծախսերը, որոնք կազմել են համապատասխանաբար 1 մլրդ դրամ և 225 մլն դրամ:

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն պետական մարմինների կողմից հայցադիմումների, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական տուրքի, սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամներին վարորդական իրավունքի վկայական տալու համար պետական բյուջեից իրականացվող պետական տուրքի վճարումների, պետական հիմնարկների՝ ՊՈԱԿ-ների վերակազմակերպման նպատակով ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրում գրանցման համար տրամադրվել է համապատասխանաբար 492.3 մլն դրամ, 25.5 հազ. դրամ և 107 հազ. դրամ: 4.1 մլրդ դրամ է տրամադրվել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում գույքն առանձնացնելիս գույքը ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի փոխհատուցման նպատակով:

2008 թվականի ինն ամիսներին շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 1.9 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 63.8%-ը: Ծեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով:

Հաշվետու ժամանակահատվածում «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ-ին պետական աջակցության համար նախատեսված ավելի քան 19.7 մլն դրամն ամբողջությամբ տրամադրվել է:

2008 թվականի ինն ամիսներին օդի աղտոտման դեմ պայքարի ուղղությամբ կատարված ծախսերը կազմել են 114.4 մլն դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրի 63.8% կատարողական, ինչը հիմնականում պայմանավորված է «Ծրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի վերազինման ծրագրի ցածր կատարողականով (նախատեսված 75.8 մլն դրամի դիմաց կատարվել է 15.4 մլն դրամի ծախս): Ծաղկաձորի օդային ավագանի աղտոտվածության մոնիթորինգի կայանի ստեղծման և շահագործման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են շուրջ 23.6 մլն դրամ՝ ապահովելով իննամսյա ծրագրի 84.2% կատարողական: «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին և ջրային օբյեկտների և օդային ավագանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի իրականացմանը պետական աջակցությունը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով համապատասխանաբար 4.9 մլն դրամ և 70.4 մլն դրամ:

Կենսարազմագանության և բնության պաշտպանության ծրագրերին ուղղվել է ավելի քան 338.3 մլն դրամ՝ 62.7%-ով կատարելով իննամսյա ծրագիրը: Ծեղումը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ

իրականացվող Սևանա լճի բնապահպանական ծրագրի ֆինանսավորման համար նախատեսված 130.4 մլն դրամ միջոցները չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև ձկան պաշարների համալրման գծով պետական պատվերի ու Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքների ծրագրերի ցածր կատարողականով, որոնք կատարվել են համապատասխանաբար 29.9 և 15.3 տոկոսով: 92.9%-ով է կատարվել ՀՀ կենդանիների և բույսերի Կարմիր գրքի լրամշակման ծրագիրը, որի ժախսերը կազմել են 6.5 մլն դրամ, և 86.3%-ով կատարվել է «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տեխնիկական վերազինման ծրագիրը, որի շրջանակներում նախատեսված շուրջ 12 մլն դրամից օգտագործվել է 10.3 մլն դրամը: Նշենք, որ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի մյուս ծրագրերն իրականացվել են նախատեսված ծավալով:

Շրջակա միջավայրի պաշտպանության (այլ դասերին չպատկանող) ծախսերը կազմել են ավելի քան 1.4 մլրդ դրամ կամ ծրագրվածի 63.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և դրամաշնորհային ծրագրերի և Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով: Մասնավորապես՝ ՀԲ աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 333.0 մլն դրամ և 176.5 մլն դրամ ծախսեր կամ նախատեսվածի 46.1 և 52.7 տոկոսը: Հայաստանի անտառների զարգացման շվեդական դրամաշնորհային ծրագրի կատարողականը կազմել է 53.1% կամ ավելի քան 181.5 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում տնտեսումներ են արձանագրվել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերում, որոնք կազմել են 611.4 մլն դրամ կամ ծրագրի 92.7%-ը: Բնության հատուկ պահպանվող տարածքների վերանայման, սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքների, ջրի ազգային ծրագրի մշակման և ջրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման ծրագրերի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում նախատեսված միջոցներից օգտագործվել են համապատասխանաբար 94.7, 89 և 68.7 տոկոսը: Նշենք, որ տվյալ խմբում նախատեսված ծրագրերից երեքը՝ «Անալիտիկ» ՓԲԸ ընկերության կարողությունների զարգացման ծրագիրը, բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական աշխատանքների, համակարգչային ցանցի սպասարկման և զարգացման իրականացման նպատակով պետական աջակցությունը և ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի վարման նպատակով «Հիդրոերկրաբանական

մոնիթորինգ» ՊՈԱԿ-ին նախատեսված պետական աջակցությունը ամբողջությամբ կատարվել են:

2008 թվականի ինն ամիսներին քննակարանային շինարարության և կոմունային ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 10 մլրդ դրամ՝ կազմելով իննամսյա ծրագրի 66.6%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 2.9 մլրդ դրամ է տրամադրվել քննակարանային շինարարության ոլորտին՝ կազմելով ծրագրվածի 82.8%-ը: Շեղումը պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականով, որոնք նախատեսված 3.1 մլրդ դրամի դիմաց կազմել են շուրջ 2.5 մլրդ դրամ կամ ծրագրվածի 80.8%-ը: Իսկ անավարտ շինարարության բնակչինարարական կոռպերատիվների փայտերերի ներդրած միջոցների դիմաց պետական օգնությունը կազմել է 363.7 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 99.6%-ով:

Բաժնի ծախսերի 55.2%-ն ուղղվել է ջրամակատարման բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են ավելի քան 5.5 մլրդ դրամ կամ իննամսյա ծրագրի 57.6%-ը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Խմբում նախատեսված 17 ծրագրերից միջոցներ են օգտագործվել 13-ի համար, որոնցից 6-ը վարկային ծրագրեր են: Մասնավորապես՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի շրջանակներում ծախսվել է 238.5 մլն դրամ կամ նախատեսվածի 32.6%-ը, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրերի գծով ծախսերը կազմել են համապատասխանաբար 1.5 մլրդ դրամ և 543.9 մլն դրամ՝ ապահովելով 101.2 և 35.5 տոկոս կատարողական: 61.4% կատարողական է արձանագրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի շրջանակներում՝ կազմելով 769.2 մլն դրամ, իսկ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի կատարողականը կազմել է 48.9% (շուրջ 52.6 մլն դրամ): Հարկ է նշել, որ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի գծով արձանագրվել է ծրագրի 3.8%-ով գերազանցում (նախատեսված 1144.3 մլն դրամի դիմաց օգտագործվել է ավելի քան 1187.8 մլն դրամ): 25.4 մլն դրամ է օգտագործվել Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ

իրականացվող ՀՀ Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի վերականգնման ծրագրի շրջանակներում, որը 2008 թվականի պետական բյուջեում նախատեսված չէ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից ամբողջությամբ կատարվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի և «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սուբսիդավորումը՝ համապատասխանաբար 910.1 մլն դրամի և 55.1 մլն դրամի չափով:

2008 թվականի ինն ամիսներին պետական բյուջեի ծախսերի՝ *փողոցների լուսավորման* խմբում 848.1 մլն դրամ է օգտագործվել Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 81.9%-ը:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների համար կատարվել են 2.2 մլն դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի կատարումը 56.1%-ով, իսկ բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների՝ այլ դասերին չպատկանող ծրագրերի գծով կատարվել են 768.6 մլն դրամ ծախսեր՝ ապահովելով իննամսյա ծրագրի 82.8%-ը: Նշված թերակատարումները ևս մեծ մասամբ պայմանավորված են այս խմբերում նախատեսված՝ Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի ցածր կատարողականով:

2008 թվականի ինն ամիսներին *առողջապահության* ոլորտում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 31.6 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսվածի 83%-ը: Ընդ որում, բոլոր խմբերում առկա են ծրագրից շեղումներ: Բաժնի ծախսերի 40.7%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 37.3%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների ֆինանսավորմանը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման առաջին և երկրորդ վարկային ծրագրերի, կենտրոնացված կարգով բժշկական սարքերի և սարքավորումների ձեռք բերման, ինչպես նաև զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության գծով պետական պատվերի ծախսերի ցածր կատարողականով:

Հաշվետու ժամանակահատվածում բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռք բերման նպատակով պետական բյուջեից ծախսվել է ավելի քան 2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրվածի 55%-ը: Ընդ որում, կենտրոնացված կարգով բժշկական սարքերի և սարքավորումների ձեռք բերման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 37.2%-ի կամ 443.6 մլն դրամի չափով, իսկ կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռք բերման և ՀՀ առողջապահության նախարարության արտաքյուղային միջոցների հաշվին իրականացվող՝ տուբերկուլոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի

ուժեղացման ծրագրերն ունեցել են համապատասխանաբար 67.3% (1.2 մլրդ դրամ) և 56.3% (407.7 մլն դրամ) կատարողական:

2008 թվականի ինն ամիսներին *արտահիվանդանոցային ծառայությունների* ձեռք բերմանը տրամադրվել է ավելի քան 11.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 91.8%-ով կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության գծով պետական պատվերի ցածր կատարողականով, որը կազմել է 55.8% կամ 822.2 մլն դրամ: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 45.6%-ը կամ շուրջ 5.4 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների, 21.1%-ը կամ շուրջ 2.5 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական ծառայությունների, 4.2%-ը կամ 492.5 մլն դրամը՝ ստոմատոլոգիական ծառայությունների և 29.2%-ը կամ ավելի քան 3.4 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը, որոնք կատարել են իննամսյա ծրագիրը համապատասխանաբար 99.4, 97.6, 84.2 և 79.8 տոկոսով:

Հաշվետու ժամանակահատվածում *հիվանդանոցային ծառայությունների* ձեռք բերման ծախսերը կազմել են շուրջ 12.9 մլրդ դրամ կամ ինն ամիսների համար նախատեսվածի 97.8%-ը: Խմբի ծախսերի 26.5%-ը կամ շուրջ 3.4 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների, 36.9%-ը կամ 4.75 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների և 36.6%-ը կամ ավելի քան 4.7 մլրդ դրամը՝ բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայությունների ծախսերը, որոնք համապատասխանաբար 96.8, 98.1 և 98.3 տոկոսով ապահովել են իննամսյա ծրագրի կատարումը:

2008 թվականի ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեից շուրջ 2 մլրդ դրամ տրամադրվել է *հանրային առողջապահական ծառայությունների* ֆինանսավորմանը՝ 98.8%-ով ապահովելով նախատեսվածը: Խմբում ընդգրկված են 7 ծրագրեր, որոնցից ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի դեմ պայքարի ծրագրի գծով պետական պատվերի և ծխելու դեմ պայքարի պետական ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Նշանակած ոլորտի ծրագրերում մեծ տեսակարար կշիռ ունեն հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական միջոցառումների իրականացման գծով պետական պատվերի համար տրամադրված միջոցները, որոնք կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը:

Առողջապահության գծով հետազոտական և նախագծային աշխատանքների համար հաշվետու ժամանակահատվածում նախատեսված ծախսերը կատարվել են 75.4%-ով՝ կազմելով ավելի քան 4.9 մլն դրամ:

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերը կազմել են ավելի քան 2.9 մլրդ դրամ կամ իննամյա ծրագրի 45.6%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 20 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են չորս վարկային և չորս դրամաշնորհային ծրագրեր: Նշենք, որ արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերը խմբում ունեն զգալի տեսակարար կշիռ՝ 43.6%, և դրանց ցածր կատարողականով է հիմնականում պայմանավորված խմբի ծախսերի շեղումը ծրագրվածից: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման առաջին և երկրորդ վարկային ծրագրերի շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 468.5 մլն դրամ և 624.5 մլն դրամ՝ ապահովելով 31.9% և 25.4% կատարողական, իսկ նույն վարկային ծրագրին աջակցելու նպատակով տրամադրված ճապոնական դրամաշնորհի հաշվին կատարված ծախսերը կազմել են շուրջ 32.4 մլն դրամ կամ նախատեսվածի 54.5%-ը: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի շրջանակներում տվյալ խմբում կատարվել են շուրջ 30.9 մլն դրամի ծախսեր կամ նախատեսվածի 71.2%-ը, իսկ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թոշնագրիափին հակազդելու վարկային ծրագրի կատարողականը կազմել է 74.4% կամ 95.6 մլն դրամ: Նույն ծրագրի շրջանակներում իրականացվող ճապոնական դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 2.9 մլն դրամ կամ նախատեսվածի 9.3%-ը, իսկ Թոշնագրիափին հակազդելու ծրագրի համաֆինանսավորման ճապոնական դրամաշնորհային ծրագիրը կատարվել է 6.9%-ով՝ կազմելով 15.5 մլն դրամ:

Նշված խմբում շուրջ 532.4 մլն դրամ է տրամադրվել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով՝ ապահովելով 85.5% կատարողական:

Հանգստի, մշակությի և կրոնի բնագավառներում 2008 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից կատարվել են շուրջ 10.6 մլրդ դրամի ծախսեր՝ ապահովելով նախատեսված ցուցանիշի 84.7%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է մշակութային ծառայությունների խմբի ծրագրերի գծով:

Հաշվետու ժամանակահատվածում 947.3 մլն դրամ է տրամադրվել հանգստի և սպորտի ծառայությունների ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 94.2%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է մարզաձևերի զարգացման նպատակով ՀՀ մարզական ֆեդերացիաներին և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-րդ մարզական

խաղերի անցկացման նպատակով «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծրագրերում:

Մշակութային ծառայություններին տրամադրվել է շուրջ 6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրով նախատեսվածի 80.4%-ը: Ընդ որում, խմբի բոլոր դասերում առկա են ծրագրից շեղումներ: Մասնավորապես՝ 905.3 մլն դրամ տրամադրվել է գրադարաններին՝ կազմելով նախատեսվածի 79.4%-ը: Թաճացարանների և ցուցահանդեսների ծախսերը կազմել են 858.2 մլն դրամ կամ ծրագրով նախատեսվածի 82.9%-ը: Մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների ծախսերը կազմել են 681.8 մլն դրամ՝ նախատեսված 980.9 մլն դրամի փոխարեն: Այլ մշակութային կազմակերպությունների գծով օգտագործվել է 573.7 մլն դրամ կամ նախատեսված հատկացումների 91.8%-ը: Արվեստի ոլորտի ֆինանսավորմանը տրամադրվել է 2.2 մլրդ դրամ՝ նախատեսված 2.6 մլրդ դրամի դիմաց: Կինեմատոգրաֆիայի բնագավառին տրամադրված միջոցները կազմել են 426.5 մլն դրամ կամ ծրագրով նախատեսված հատկացումների 96.7%-ը:

2008 թվականի ինն ամիսների ընթացքում ավելի քան 326.5 մլն դրամ է տրամադրվել հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման աշխատանքների ֆինանսավորմանը, որը կազմել է ծրագրի 52.4%-ը՝ պայմանավորված կատարված աշխատանքների ծավալով:

Ուղիղ- և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 3.1 մլրդ դրամ՝ 92.5%-ով ապահովելով ծրագրային հատկացումները: Մասնավորապես՝ 2.6 մլրդ դրամ (94.6%) են կազմել հեռուստահաղորդումների, 447.8 մլն դրամ (81.6%)՝ հրատարակչությունների և խմբագրությունների պահպանման, 39 մլն դրամ (100%)՝ տեղեկատվության ձեռք բերման ծախսերը: Հեռուստահաղորդումների ծախսերի շեղումը հիմնականում պայմանավորված է հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով «Հայաստանի հանրային հեռուստալիներություն» ՓԲԸ-ին պետական աջակցության համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է նախ այն հանգանանքով, որ այս դասում նախատեսված չորս ծրագրեր չեն կատարվել, այդ թվում՝ գրականության հրատարակման գծով պետական պատվերի, «Պաշտոնական հայտարարություններ» կայք-էջի ստեղծման և վարման, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի զարգացման և իրավաբանական տերմինարանության զարգացման ծրագրերը, ինչպես նաև հրատարակումների գծով պետական պատվերի ցածր կատարողականով:

Տեղեկատվության ձեռք բերման, պահպանման և արխիվացման գծով «Արմենպրես» ՓԲԸ-ին պետական աջակցության համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 39 մլն դրամ:

Կրոնական և հասարակական այլ ծառայությունների ձեռք բերմանը 2008 թվականի հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել է 313.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 79.4%-ը, որից 228.9 մլն դրամը (նախատեսվածի 95.4%-ը) հատկացվել է երիտասարդական ծրագրերին, 84.3 մլն դրամը (54.5%)՝ քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների և արհմիությունների խմբին: Շեղումը մեծ մասամբ պայմանավորված է ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում 3 և ավելի տոկոս ճայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին, ինչպես նաև հասարակական կազմակերպություններին պետական աջակցության նպատակով նախատեսված միջոցները պակաս օգտագործելու հանգամանքով, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 24.5% և 76.3%:

2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին *հանգստի, մշակույթի և կրոնի՝* այլ դասերին չպատկանող ծախսերի գծով գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների (նախարարությունների աշխատակազմների մասով) պահպանման նպատակով ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է 258.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 82%-ը:

2008 թվականի ինն ամիսներին *կրթության* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 73.7 մլրդ դրամ՝ ապահովելով իննամյա ծրագրի 90.5% կատարողական: Շեղումն առաջացել է հիմնականում կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում ընդգրկված ծրագրերի ցածր կատարողականի արդյունքում:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից շուրջ 11.5 մլրդ դրամ տրամադրվել է նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթությանը, որն ապահովել է ծրագրի 99.7% կատարում:

Կրթության ոլորտի ծախսերի 43.5%-ն ուղղվել է միջնակարգ ընդհանուր կրթությանը: Այն կազմել է շուրջ 32.1 մլրդ դրամ (որից 21.6 մլրդ դրամը՝ հիմնական և 10.5 մլրդ դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ծախսերն են՝ 3.3%-ով գերազանցելով ծրագրված հատկացումները: Վերջինս պայմանավորված է Լինսի հիմնադրամի միջոցներով իրականացնելող «Կրթական հաստատությունների վերականգնում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ավելի քան 1.6 մլրդ դրամ ծախսերով, որն ընթացիկ տարվա պետական բյուջեում նախատեսված չէ: Միջնակարգ ընդհանուր կրթության խմբի բոլոր ծրագրերը, բացառությամբ մեկի, գրեթե ամբողջությամբ կատարվել են: Համեմատաբար ցածր՝ 92.3% կատարողական է արձանագրվել արտակարգ

ունակություններ դրսերած երեխաների հանրակրթության կազմակերպման ժախսերում, որոնք կազմել են 278.3 մլն դրամ:

2008 թվականի ինն ամիսներին *մախնական մասնագիտական* (արհեստագործական) և *միջին մասնագիտական* կրթության ժախսերը կազմել են ավելի քան 2.8 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 98.2%-ը, որից 1.2 մլրդ դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), 1.7 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ժախսերն են:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից 4.7 մլրդ դրամ տրամադրվել է *բարձրագույն կրթության* բնագավառին՝ ապահովելով իննամյա ծրագրի 90.8%-ով կատարում:

Հստ մակարդակների չղասակարգվող կրթության ժախսերն անցած ինն ամիսներին կազմել են շուրջ 1.7 մլրդ դրամ (որից շուրջ 1.2 մլրդ դրամը՝ արտադրոցական դաստիարակության, իսկ 484.5 մլն դրամը՝ լրացուցիչ կրթության ժախսերն են՝) ապահովելով ծրագրի 90.6%-ով կատարում: Շեղումն առաջացել է հիմնականում լրացուցիչ կրթության բնագավառում «Դատական դպրոց» ՊՈԱԿ-ին պետական աջակցության, ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման և արտադրոցական դաստիարակության բնագավառում երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվազարանների գծով ուսուցման ժախսերի ցածր կատարողականի արդյունքում:

Հաշվետու ժամանակահատվածում *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ժախսերը կազմել են շուրջ 20.7 մլրդ դրամ կամ իննամյա ծրագրի 72%-ը: Շեղումն ավելի քան կիսով չափ պայմանավորված է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների ծրագրի և կրթական օբյեկտների հիմնանորոգման ծրագրի ցածր կատարողականով. առաջին ծրագրի ժախսերը կազմել են 20 մլն դրամ կամ նախատեսվածի 0.9%-ը, իսկ կրթական օբյեկտների հիմնանորոգման համար օգտագործվել է ավելի քան 10.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 82.8%-ը: Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների շրջանակներում մի շարք այլ ծրագրերի գծով ևս արձանագրվել է ցածր կատարողական: Մասնավորապես՝ հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման և հրատարակման ժախսերը կատարվել են 2.8%-ով, ռազմագիտության կարինետների վերականգնման ծրագրը՝ 17.5%-ով, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ժախսերը՝ 22.6%-ով, կենտրոնացված կարգով ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների,

ծրագրների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռք բերման ծախսերը՝ 24.2%-ով, ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցները մանկավարժական կադրերով համալրման ծրագիրը՝ 43.9%-ով և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից 277.6 մլն դրամ տրամադրվել է այլ դասերիմ չպատկանող կրթուրյան բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով՝ ապահովելով ինն ամսվա համար նախատեսված ծախսերի 94.6% կատարողական):

2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում սոցիալական պաշտպանության բնագավառի ծախսերը կազմել են շուրջ 156.3 մլրդ դրամ՝ 94.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հարկ է նշել, որ բաժնի բոլոր խմբերում առկա են տնտեսումներ: Առավել խոշոր տնտեսումներ գրանցվել են ծերության, բնակարանային ապահովման, այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության ու ընտանիքի անդամներ և զավակների խմբերում:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից 800.9 մլն դրամ է տրամադրվել վատառողջության և անաշխատունակության խմբի ծախսերին՝ ապահովելով ծրագրի 92.3%-ով կատարում: Նշված հատկացումներից 120 մլն դրամ տրամադրվել է վատառողջությանը, որի կատարողականը կազմել է 97.7% և շուրջ 680.9 մլն դրամ՝ անաշխատունակությանը, որի կատարողականը կազմել է 91.4%: Շեղումը հիմնականում առկա է «Հաշմանդամներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում հաշմանդամներին անվճար պրոբեզորթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման ծրագրում, որի շրջանակներում կատարվել են 618.3 մլն դրամ ծախսեր կամ նախատեսվածի 93.4%-ը, իսկ տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցանելու և համակարգչային տեխնիկայով ապահովելու համար պետական աջակցության ծրագրի շրջանակներում վճարումներ չեն կատարվել:

Ծերության բնագավառի ծրագրերին 2008 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 115.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 96.9% կատարողական: Համեմատաբար խոշոր տնտեսումներ կան սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման և ապահովագրական կենսաթոշակների ու դրանց վճարման հետ կապված փոստային ծառայությունների ձեռք բերման ծախսերում: Նշված ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են համապատասխանաբար 12.8 մլրդ դրամ (90%) և 95.1

մլրդ դրամ (98.1%): Զգալի տնտեսում է արձանագրվել նաև շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերում, որոնք կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 83.3%-ը:

Հարազատին կորցրած անձանց հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 17.1 մլն դրամ կամ նախատեսվածի 48.9%-ը:

«Հնտանիքի անդամներ և զավակներ» խմբի գծով պետական բյուջեի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 26 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96%-ը: Նշված գումարից 21.6 մլրդ դրամն ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության գումարն է, որը ֆինանսավորվել է 98%-ով: Զգալի շեղումներ են արձանագրվել նաև «Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին պետական աջակցության, ՀՀ ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություն հանդիսացող ՊՈԱԿ-ներին ու տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծրագրերում, որոնց գծով ծախսերը կատարվել են համապատասխանաբար 7.8%-ով, 73.4%-ով և 91.4%-ով:

Սոցիալական ոլորտի ծախսերից 2.4 մլրդ դրամ տրամադրվել է *գործազրկության* խմբի ծրագրերին, որը կազմել է նախատեսվածի 86.9%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է «Զբաղվածության ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվող վարձատրվող հասարակական աշխատանքների և գործազրկության նպաստի գծով, որոնց ծախսերը կազմել են համապատասխանաբար 456 մլն դրամ (76.9%) և 1.8 մլրդ դրամ (94.5%):

Բնակարանային ապահովման ծրագրերին 2008 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 3.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 64.5%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման ծրագրում, որի շրջանակներում օգտագործվել է 1.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 44.7%-ը: 83.7%-ով է կատարվել գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության ծրագիրը, որի ծախսերը կազմել են 538.3 մլն դրամ: «Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում առանց ծննդական խնամքի մնացած երեխաներին բնակարանի տրամադրման նպատակով նախատեսված 124 մլն դրամը հաշվետու ժամանակահատվածում չի օգտագործվել:

Սոցիալական հատուկ արտոնություններին (այլ դասերին չպատկանող) տրամադրվել է ավելի քան 3 մլրդ դրամ՝ ապահովելով իննամյա ծրագրի 91.2% կատարողական: Ծեղումը հիմնականում պայմանավորված է ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13-րդ հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրման և «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծրագրերի ցածր կատարողականությունը: Նշված ծրագրերի շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 1.6 մլրդ դրամ և 844.7 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 91.6%-ը և 86.6%-ը:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերին հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 4.9 մրդ դրամ՝ կազմելով իննամյա ծրագրի 77%-ը: Ծեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման, կենսաթոշակային ապահովության ոլորտում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի պահպանման և զարգացման, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարվող նպաստների ծրագրերի ցածր կատարողականությունը: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի շրջանակներում կատարվել են 283 մլն դրամի ծախսեր կամ նախատեսվածի ընդամենը 34.8%-ը: Կենսաթոշակային ապահովության ոլորտում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի պահպանման և զարգացման ծախսերը կազմել են ավելի քան 1.2 մլրդ դրամ կամ ծրագրի 79%-ը, իսկ ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարվող նպաստների կատարողականը կազմել է 1.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 84.9%-ը:

2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից նախատեսված շուրջ 32 մլրդ դրամից օգտագործվել է ընդամենը 22.3 մլրդ դրամը կամ 69.7%-ը: Նշված գումարից 7.8 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերի, 14.5 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Նշենք, որ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից շուրջ 1.1 մլրդ դրամի հատկացուներ են կատարվել նաև պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված հոդվածների

գծով: Մասնավորապես՝ 1.07 մլրդ դրամ վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին, 16.7 մլն դրամ՝ քաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռք բերմանը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 10 մլրդ դրամ պակասուրդով՝ նախատեսված 87.9 մլրդ դրամի դիմաց: Զօգտագործված միջոցների հիմնական մասը ներքին ֆինանսական ակտիվների գծով է: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 6.3 մլրդ դրամ հավելուրդով (GFS-2001-ի դասակարգման): Հաշվետու ժամանակահատվածում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են 4.4 մլրդ դրամ՝ նախատեսված 65.7 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում նշված ցուցանիշը կազմել էր -14.5 մլրդ դրամ: Պակասուրդի ներքին ֆինանսավորման ցուցանիշի՝ ծրագրից շեղումն ավելի քան կիսով չափ պայմանավորված է ծախսերի տնտեսումների արդյունքում ազատ բյուջետային միջոցների առկայությամբ, որոնք հաշվետու ժամանակահատվածում ավելացել են 10.5 մլրդ դրամով՝ 21.8 մլրդ դրամ օգտագործելու փոխարեն: Բացի այդ, չեն օգտագործվել նաև 2008 թվականի տարեսկզբի ազատ միջոցները, որոնց գծով նախատեսվել էին շուրջ 10.4 մլրդ դրամ մուտքեր, և բաժնետոմսերի ու կապիտալում այլ մասնակցության իրացումից նախատեսված 13.4 մլրդ դրամ մուտքերի դիմաց փաստացի միջոցներ չեն ներգրավվել:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում գանձապետական պարտատոմսերից զուտ մուտքերը կազմել են 16.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 73.8%-ը: Պակասուրդը ծրագրվածից պակաս ֆինանսավորելու պատճառը հաշվետու տարվա առաջին կիսամյակում ծրագրվածից պակաս տեղաբաշխումներն էին, ինչպես նաև տարվա սկզբի համեմատ տեղաբաշխման եկամտաբերության մոտ երկու տոկոսային կետով աճը:

Հաշվետու ժամանակահատվածում հետ են գնվել 392.3 հազ. դրամի պետական ներքին շահող փոխառության պարտատոմսեր՝ նախատեսված 20 մլն դրամի դիմաց: Մուրհակների մարման նպատակով նախատեսված 78.9 մլն դրամի դիմաց կատարվել են 47.9 մլն դրամի վճարումներ: Ընթացիկ տարվա ինն ամիսների ընթացքում պետական բյուջեից տրամադրվել են 1.8 մլրդ դրամի ներքին վարկեր՝ կազմելով նախատեսվածի 93.3%-ը: Մասնավորապես՝ 1.7 մլրդ դրամ է տրամադրվել արտաքին աղբյուրներից ստացված նպատակային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 93.7%-ը, 97.1 մլն դրամ՝ բռնադատված քաղաքացիներին՝ կազմելով նախատեսվածի 86.3%-ը: Նախկինում տրամադրված վարկերից բյուջե է վերադարձվել 275 մլն դրամ, որի գծով հաշվետու ժամանակահատվածում ծրագրվել էին 139.2 մլն դրամ մուտքեր: Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել էր 21.8 մլրդ դրամ օգտագործել բյուջեի 2008 թվականի տարեսկզբի ազատ միջոցներից և

Ժամանակավորապես ազատ միջոցներից, սակայն փաստացի արդյունքներով դրանք, ինչպես նշվել է, 10.5 մլրդ դրամով ավելացել են:

2008 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի պակասուրդն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել է 5.6 մլրդ դրամով՝ կազմելով նախատեսված 22.2 մլրդ դրամի 25.5%-ը: Պակասուրդի ցածր ֆինանսավորման պատճառը արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում միջոցների պակաս ստացումն է, ինչպես նաև վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդների 4.3 մլրդ դրամով ավելացումը: Փոխառու միջոցներից ֆինանսավորումը կատարվել է 72.2%-ով՝ կազմելով 30.1 մլրդ դրամ: 2007 թվականի նոյեն ժամանակահատվածի համեմատ պակասուրդի արտաքին ֆինանսավորումը նվազել է 31%-ով՝ հիմնականում պայմանավորված ԼՂՀ-ին տրամադրված վարկի ավելացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվել են 34.6 մլրդ դրամ վարկային միջոցներ, որից 6.4 մլրդ դրամը ստացվել է ՀԲ Աղքատության հաղթահարման աջակցության չորրորդ վարկային ծրագրի շրջանակներում, 28.2 մլրդ դրամը՝ նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում: Վարկերի ստացման իննամսյա ծրագրի կատարողականը կազմել է 75%:

2008 թվականի ինն ամիսների ընթացքում շորջ 4.5 մլրդ դրամ ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 3.7 մլրդ դրամ հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 561.8 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկի մարմանը, 132.5 մլն դրամ՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 28.9 մլն դրամ՝ Ֆրանսիայի կողմից ֆինանսավորված ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման ծրագրի գծով և 76.5 մլն դրամ՝ Լինսի հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրի գծով պարտքի մարմանը:

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով ֆինանսավորման ծրագիրը կատարվել է ամբողջությամբ և կազմել 20.18 մլրդ դրամ, որից 20.21 մլրդ դրամը տրամադրվել է ԼՂՀ-ին՝ որպես միջազնութական վարկ, և 28.8 մլն դրամ վճարվել է Վրաստանի կողմից՝ ՀՀ նկատմամբ ունեցած պարտքի դիմաց: